



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

# ԿԱՆՏԵԳՂ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻԶ ԱՈՒՋԵՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



**GANTEGH** BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE  
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL

ՄԱՅՐ ՏԼԵՃԱՐ

ԿԻՐԱԿԻ 10 Մայիս 2020

162

DIMANCHE, 10 Mai 2020



**ՏՕՆ**

**ԵՐԵԻՄԱՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ**

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2  
Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca) / E.mail: [saintgregorychurch@gmail.com](mailto:saintgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՏՕՆ ԵՐԵՒՄԱՆ Ս. ԽԱԶԻ  
FÊTE DE L'APPARITION DE LA SAINTE CROIX

Աստուածաշունչի Ընթերցումներ

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

17. 1- 15

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՍԱԿԷՆ

1. 1- 10

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

7. 14- 24

Les lectures de la Bible d'aujourd'hui :

1 JEAN 1. 1- 10

JEAN 7. 14- 24

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԳԷՈՂԳ ՔՂՆՅ. ԱԲԵԱՆ

Célébrant:

RÉV. PÈRE GEVORG APYAN

Առաւօտեան ժամերգութիւն ժամը-

Office Matines à

9:30-ին

9h30

Ս. Պատարագ ուղիղ սփռում ժամը-

La Sainte Messe - Live à

10:30-ին

10h30

Յոգեհանգիստ ուղիղ սփռում ժամը-

Requiem - Live à

12:30-ին

12h30

Organist: Mr. Vahram Sargsyan

Emma & Zara Sargsyan

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ 1- ԻՆ ՆԱՄԱԿԸՆ 1.1- 10

Կենաց բանին վրայով, որ սկիզբէն էր, որուն համար լսեցինք, որ մեր աչքերովը տեսանք, որուն նայեցանք ու մեր ձեռքերը շօշափեցին. (Եւ կեանքը յայտնուեցաւ ու տեսանք եւ կը վկայենք ու ձեզի կը պատմենք այն յափտենական կեանքը, որ Հօրը քով էր ու մեզի յայտնուեցաւ.) այն որ տեսանք ու լսեցինք՝ ձեզի կը պատմենք, որպէս զի դուք ալ մեզի հաղորդակից ըլլաք: Մեր հաղորդակցութիւնը Հօրը հետ է ու իր Որդիին Յիսուս Քրիստոսին հետ: Այս բաները կը գրենք ձեզի, որպէս զի ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ:

Սահկա է այն պատգամը որ իրմէ լսեցինք ու ձեզի կ'իմացնենք, թէ՛ Աստուած լոյս է ու անոր մէջ բնաւ խաւար չկայ: Եթէ ըսենք թէ Անոր հետ հաղորդակից ենք ու խաւարի մէջ պտըտինք, սուտ կը խօսինք եւ ճշմարտութիւնը չենք ըսեր: Հապա եթէ լոյսի մէջ քալենք, ինչպէս անհկա լոյսի մէջ է, իրարու հետ հաղորդակից կ'ըլլանք ու անոր Որդիին Յիսուս Քրիստոսին արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ: Եթէ ըսենք թէ «Մենք մեղք մը չունինք», ինքզինքնիս կը խաբենք ու մեր մէջ ճշմարտութիւն չկայ: Եթէ խոստովանինք մեղքերնիս, հաւատարիմ ու արդար է անհկա մեր մեղքերուն թողութիւն տալու եւ մեզ ամէն անիրաւութենէ սրբելու: Եթէ ըսենք թէ «Մեղք մը չգործեցինք», ստախօս կը ցուցնենք զանհկա ու անոր խօսքը մեր մէջ չէ:

## ԱԹԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 7. 14- 24

Երբ տօնը կէս եղաւ, Յիսուս տաճարը գնաց ու կը սորվեցնէր: Հրեաները կը զարմանային ու կ'ըսէին. «Ի՞նչպէս ասիկա գրքերը գիտէ, որ սորված չէ»: Յիսուս պատասխան տուաւ անոնց ու ըսաւ. «Իմ վարդապետութիւնս իմն չէ, հապա զիս դրկողինն է: Եթէ մէկը կ'ուզէ անոր կամքը ընել, պիտի գիտնայ այս վարդապետութեան համար թէ արդեօք Աստուծմէ՞ է թէ ես ինքնիրմէս կը խօսիմ: Ան որ ինքնիրմէս կը խօսի, իր անձին փառքը կը փնտռէ, բայց ան որ զինք դրկողին փառքը կը փնտռէ, անհկա ճշմարիտ է եւ անոր քով անիրաւութիւն չկայ: Մովսէս չտուա՞ւ ձեզի օրէնքը ու ձեզմէ մէկն ալ չի պահեր օրէնքը: Ինչո՞ւ

կ'ուզէք զիս սպաննել»: Պատասխան տուաւ ժողովուրդը ու ըսաւ. «Դեւ կայ քու ներսդ. ո՞վ կ'ուզէ քեզ սպաննել»: Պատասխան տուաւ Յիսուս եւ ըսաւ անոնց. «Գործ մը գործեցի ու ամէնքդ ալ զարմացեր էք: Արդ՝ Մովսէս ձեզի թլփատութիւնը տուաւ, որ ոչ թէ Մովսէսէն էր, հապա նախնիքներէն, ու շաբաթ օրը մարդ կը թլփատէք: Եթէ շաբաթ օրը մարդ կը թլփատէք որպէս զի Մովսէսին օրէնքը չքակուի, ինծի կը բարկանա ք որ եւ շաբաթ օրը ամբողջ մարդ մը բժշկեցի: Աչքի երեւցածին պէս դատաստան մի՛ ընէք, հապա արդար դատաստան ըրէք»:

### 1 JEAN 1. 1- 10

Ce qui était dès le commencement, ce que nous avons ouï, ce que nous avons vu de nos propres yeux, ce que nous avons contemplé, et que nos propres mains ont touché de la Parole de vie, (Car la vie a été manifestée, et nous l'avons vue, et aussi nous le témoignons, et nous vous annonçons la vie éternelle, qui était avec le Père, et qui nous a été manifestée.) Cela, [dis-je], que nous avons vu et ouï, nous vous l'annonçons; afin que vous ayez communion avec nous, et que notre communion [soit] avec le Père et avec son fils Jésus-Christ. Et nous vous écrivons ces choses, afin que votre joie soit parfaite.

Or c'est ici la déclaration que nous avons entendue de lui, et que nous vous annonçons, [savoir], que Dieu est lumière, et qu'il n'y a en lui nulles ténèbres. Si nous disons que nous avons communion avec lui, et que nous marchions dans les ténèbres, nous mentons, et nous n'agissons pas selon la vérité. Mais si nous marchons dans la lumière, comme Dieu est en la lumière, nous avons communion l'un avec l'autre, et le sang de son Fils Jésus-Christ nous purifie de tout péché. Si nous disons que nous n'avons point de péché, nous nous séduisons nous-mêmes, et la vérité n'est point en nous. Si nous confessons nos péchés, il est fidèle et juste pour nous pardonner nos péchés, et nous nettoyer de toute iniquité. Si nous disons que nous n'avons point de péché, nous le faisons menteur, et sa parole n'est point en nous.

### JEAN 7. 14- 24

Et comme la Fête était déjà à demi passée, Jésus monta au Temple, et il y enseignait. Et les Juifs s'en étonnaient, disant : comment celui-ci soit-il les Écritures, vu qu'il ne les a point apprises? Jésus leur répondit, et dit : ma doctrine n'est pas mienne, mais elle est de celui qui m'a

envoyé. Si quelqu'un veut faire sa volonté, il connaîtra de la doctrine, savoir si elle est de Dieu, ou si je parle de moi-même. Celui qui parle de soi-même, cherche sa propre gloire; mais celui qui cherche la gloire de celui qui l'a envoyé, est véritable, et il n'y a point d'injustice en lui.

Moïse ne vous a-t-il pas donné la Loi? et cependant nul de vous n'observe la Loi? pourquoi cherchez-vous à me faire mourir? Les troupes répondirent : tu as un démon; qui est-ce qui cherche à te faire mourir? Jésus répondit, et leur dit : j'ai fait une œuvre, et vous vous en êtes tous étonnés. [Et vous], parce que Moïse vous a donné la Circoncision, laquelle n'est pourtant pas de Moïse, mais des pères, vous circoncisez bien un homme le jour du Sabbat. Si [donc] l'homme reçoit la Circoncision le jour du Sabbat, afin que la Loi de Moïse ne soit point violée, êtes-vous fâchés contre moi de ce que j'ai guéri un homme tout entier le jour du Sabbat? Ne jugez point sur les apparences, mais jugez



## Հոգեւոր Հովիւի Պատգամը

«ԽԱԶ ՔՈՒ ԵՂԻՏԻ ՄԵՉ ԱՊԱԲԵՆ»  
(Առաւօտեան ժամերգութիւն)

Յարգելի հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ,  
յիւանց զատկական շրջանին հինգերորդ «լուսապայծառ» կիրակին՝ այսօր, մեր եկեղեցին կը կատարէ «Տօն երեւման սրբոյ խաչի», որ տարեկան յիշատակումն է պատմական դէպքի մը:

Արդարեւ, Պենտեկոստէին, 7 մայիս 351 թուականին, առաւօտեան ժամը 9:00-ին Երուսաղէմի մէջ երկնակամարին վրայ տեսնուեցաւ լուսափայլ խաչ մը, որ կը սկսէր Գողգոթայի բլուրէն եւ կը հասներ Չիթենեաց լեռը:

Ս. Քաղաքին պատրիարքը՝ Ս. Կիրեղ Երուսաղեմացի, ակա-  
նատեսն ու պատմագիրը հրաշադեպ պատահարին, յարմար դա-  
տեց պաշտօնական նամակով մը զայն նկարագրել Մեծն Կոս-  
տանդինոսի որդի եւ յաջորդ Կոստանդինոս կայսրին:

Եկեղեցիին պատմութեան ու քրիստոնեութեան տարածումին  
համար սքանչելադէպքը ծանօթագրող այս նշանակալից վաւե-  
րաթուղթէն շատ համառօտակի կը քաղեմ ամենէն գլխաւոր տե-  
ղեկութիւններն ու խորհրդածութիւնները, որոնք չեն կորսնցուցած  
իրենց այժմեականութիւնը:

Թե՛ եկեղեցական եւ թե՛ աշխարհական իշխանութիւններուն  
համար Աստուծոյ կերտած «հրաշալի երեւոյթ» Է լուսաճաճանչ  
խաչը, որ՝ «մեր Տիրոջ ու Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի ... մահուան դէմ  
տարած յաղթութեան նշանն է»:

«Լոյսէ կազմուած ամենայաղթ խաչը» տեսուեցաւ ամբողջ քա-  
ղաքին բնակիչներէն, եւ այն՝ «ոչ թէ հարեւանցի եւ արագ անցնող  
տեսիլքի պէս, այլ ակնյայտի կերպով երկինքի երեսին վրայ  
տեսանելի էր ժամերով»:

«Իր բոցաճաճանչ փայլքով՝ արեւի ճառագայթներուն կը յաղթա-  
նակէր»: Անոր շողարծակումին տեւողութեան եւ ուժգնութեան  
շնորհիւ՝ «առ հասարակ քաղաքին ամբողջ բազմութիւնը սուրբ  
եկեղեցիները փութաց, եւ աստուածային այս տեսիլքէն ուրա-  
խութեամբ լեցուած... ամէն տարիքի մարդեր, ըլլան բնիկ եւ ըլլան  
դուրսէն եկած քրիստոնեաներ, միահամուռ ու միաբերան կ'օրհնէին  
եւ կը գովաբանէին մեր Տէրը եւ Աստուծոյ միածին Որդին»:

«Երեւումս սրբոյ խաչի»-ն այնքան կարեւոր թուեցաւ հաւա-  
տացեալներուն, «որովհետեւ փորձով ու գործով փաստուեցաւ, թէ  
բարեպաշտ քրիստոնեաներուն կրօնը չի հաստատուիր խօսքի  
իմաստութեամբ լոկ, այլ նաեւ՝ Ս. Հոգիին յայտնութեամբ ու զօ-  
րութեամբ: Մարդերէն չէ միայն, որ կը պատմուի, այլ նաեւ կը վկայուի  
երկինքէն»:

Յիսուս Քրիստոս Աստուածամարդէն հիմնուած, Ս. Հոգիէն հաս-  
տատուած, առաքեալներէն քարոզուած, մարդերէն պատմա-  
գրուած եւ երկինքէն վկայուած, ինչպէս ալ հայ սուրբերէն, հայրա-  
պետներէն ու նահատակներէն ապրուած այս կրօնին Էական  
խորհուրդներէն մին Է հիմնախորհուրդը խաչին, որ նախա-  
պայմանն է, ԵԱԿԵՏՆ Է ՅԱՐՈՒԹԵԱՆ:

Այս Է ճշմարիտ եւ անյետսկոչելի ուսուցումը մեր Աստուածային  
Վարդապետին. «Ով որ իր խաչը չ'առներ եւ ետեւէս չի գար, արժանի  
չէ ինծի (Մտթ. 10,38): Եթէ մէկը ուզէ ինծի հետեւիլ, թող ... առնէ իր  
խաչը եւ հետեւի ինծի (Մտթ. 16,24): Եթէ մէկը ուզէ ինծի հետեւիլ,

թող ... կրէ իր խաչը եւ ետեւէս գայ (Մրկ. 8,34): Ով որ կ'ուզէ ինծի հետեւիլ, թող ... առնէ իր խաչը ամէն օր եւ ետեւէս գայ (Ղկ. 9,23): Ով որ չ'առնէր իր խաչը եւ չի հետեւիր ինծի, չի կրնար ըլլալ իմ աշակերտս» (Ղկ. 14,27):

Այս է հաւատաւոր քոյրեր եւ եղբայրներ, ՎԱԿԵՐՎԱԿԱՆ դիտաւորութիւնը «երեւման սրբոյ խաչի»-ն, ինչպէս կը բացայայտուի անոր սկզբնաւորութեան ու վերջաւորութեան երկու տեսլավայրերէն՝ Գողգոթայի բլուրէն եւ Ձիթենեաց լեռնէն:

Ինչպէս գիտենք, Գողգոթա կատարն է Քրիստոսի չարչարանքի ու խաչակրութեան ճանապարհին, իսկ Ձիթենեաց գագաթը տեղն է յարուցեալ Փրկչին համբարձման, որ ելքն է դէպի արքայութիւնը, յաւիտենականութիւնը:

Յստակ եւ ճիշդ է վերոյիշեալ եզրայանգումը: Խաչը, մեր խաչակրումը մեզ կ'առաջնորդէ վերջնական յաղթութեան, յաւերժութեան, անմահական կեանքին:

Ուշադրութի՛ւն: Նաեւ ա՛յս է հայախոհ համոզումը, դաւանումը մեր շարակնոցին, որմէ կ'առնեմ յաղթութեան, յաւերժութեան, անմահութեան յաջորդ իմացութիւնները: Խաչն է «Գաւազան զօրութեան, Նշան յաղթութեան, Բանալի արքայութեան, Պարիսպ ամրութեան, Աշտարակ հզօրութեան, Չէն յաղթութեան»:

Խաչով, մեր խաչակրումով «յաղթեսցուք անօրէն թշնամոյն», քանի «լուսափայլ ծագմամբ հրաշափառապէս մեզ ցուցաւ՝ ի յօգնութիւն ընդդէմ թշնամոյն», որ ամէն գնով կ'ուզէ խոչընդոտել մեր յաղթանակն ու խափանել մեր յաւերժական երջանկութիւնը:

Խաչը, խաչակրութիւնը տրուեցաւ մեզի, «գի սովաւ մտցուք ընդ նեղ դուռն անձկացեալ ճանապարհին», քանի ան է «Փայտ կենաց կանգնեալի մէջ տիեզերաց, Յոյս եւ Ապաւէն ազգի մարդկան»: Խաչն է, մեր խաչակրումն է, որ «առաջնորդ եղել մեզ ի կեանս յաւիտենից»:

Այսպէս, եթէ «Տօն երեւման սրբոյ խաչի»-ն լուսածագ յարութիւնն է խաչին, ապա, ուրեմն, ան է նաեւ ստոյգ երաշխիքը մեր արեւաշող գոյատեւումին յարուցեալ ու համբարձեալ Տիրոջ թագաւորութեան մէջ, որ միայն սեր է, բերկրանք է, կեանք է:

Օրհնութեամբ՝

Տէր Դաւիթ քահանայ Մարգարեան

## « Que la croix soit notre sauveur » (Service matinale)

Chers sœurs et frères, Aujourd'hui est le quarantième dimanche "brillant" de notre période de Pâques. Notre église célèbre la fête de l'Apparition de la Sainte Croix, qui est une commémoration annuelle d'un événement historique. En effet, le 7 mai 351 avant notre ère, à 9h00, une croix brillante est apparue dans le ciel au-dessus de Jérusalem sur le mont Pentecôte, commençant à la colline du Golgotha et atteignant le mont des Oliviers.

Le patriarche saint de la ville, saint Cyrus de Jérusalem, archéologue et historien, a miraculeusement écrit une lettre officielle le décrivant comme le fils de Constantin le Grand et du prochain empereur Constantinople. J'examine brièvement certains des faits et des réflexions les plus importants sur cet important documentaire documentant l'émerveillement et la diffusion de l'histoire et du christianisme de l'Église, qui ne perdent pas leur pertinence.

Le "merveilleux phénomène" créée par Dieu pour l'église et les autorités laïques est la croix brillante, qui est "un signe de victoire sur la mort de notre Seigneur et Sauveur, Jésus-Christ". La "croix de lumière la plus victorieuse" a été vue par tous les habitants de la ville, et ce n'était "pas comme une vision d'un voisin qui passait rapidement, mais était clairement visible sur la face du ciel pendant des heures".

"Avec sa lueur rayonnante, il a surmonté les rayons du soleil." Grâce à la durée et à la force de son rayonnement, « toute la multitude de la ville ordinaire a été déplacée vers les églises saintes, et les gens de tous âges, pleins de joie et de chrétiens qui sont sortis de cette vision divine, sont venus à l'unisson et uni. Le Seigneur et le Fils unique de Dieu.

La "Aparition de la Sainte Croix" semblait si importante pour les fidèles", car il a été prouvé par l'expérience et le travail que la religion des chrétiens pieux n'est pas établie seulement par la sagesse de la parole, mais aussi par l'apparition de la Sainte Croix et le pouvoir du Saint-Esprit. Ce ne sont pas seulement des hommes qu'on le dit, mais aussi du ciel.

"Jésus-Christ a été fondé par Dieu, le Saint-Esprit est l'un des conseils essentiels de cette religion, qui a été inspiré et prêché par les apôtres, écrit par des hommes et vu du ciel, ainsi que par les saints, les patriarches et les martyrs arméniens, c'est l'un des préceptes de base de la croix.

Tel est l'enseignement vrai et indescriptible de notre Divin Maître. "Celui qui ne porte pas sa croix et ne me suit pas n'est pas



digne de moi" (Matthieu 10:38). Si quelqu'un veut me suivre, qu'il porte sa croix et me suive (Matthieu 16:24). Si quelqu'un veut le suivre, laissez-le porter sa croix et suivez-moi (Marc 8:34). Quiconque veut me suivre, qu'il porte sa croix tous les jours et me suive (Luc 9:23). Celui qui ne porte pas sa croix et ne me suit pas ne peut pas être mes disciples » (Luc 14:27).

Ce sont les frères et sœurs fidèles, la RESPONSABILITÉ de la "Sainte Croix de l'Apparition", comme le révèlent ses deux origines et la fin de ses visions: la colline du Golgotha et le mont des Oliviers.

Comme nous le savons, le Golgotha est le chemin de la souffrance et de la crucifixion du Christ, et le Mont des Oliviers est le lieu de résurrection du Sauveur ressuscité, la voie vers le royaume, vers l'éternité.

La conclusion ci-dessus est claire et correcte. La croix, notre lutte, nous mènera à la victoire ultime, à la vie éternelle et à la vie immortelle.

Attention! C'est aussi la conviction pro-arménienne, le credo de nos manuscrits, dont je tirerai la connaissance à venir de la victoire, de l'éternité, de l'immortalité. La Croix est «Le signe de la victoire, la clé du royaume, la force du mur, la force de la tour, la victoire de l'arme."

Avec la croix, avec notre crucifixion, "vainquons l'ennemi de l'anarchie", comme "miraculeusement d'une descente radieuse qu'il nous a montré, en aide contre l'ennemi", qui veut à tout prix entraver notre victoire et déjouer notre bonheur éternel.

La croix, la crucifixion, nous a été donnée, "afin que nous puissions avoir faim avec la porte étroite de la route", comme il l'a dit, c'est la croix, notre crucifixion, "qui a été notre guide pour toujours et à jamais. "

Ainsi, si la Fête de la Sainte Croix est la résurrection de l'aube de la Croix, alors c'est aussi la garantie exacte de notre glorieuse résurrection et ascension du Seigneur, qui n'est qu'amour, joie et vie.

Avec mes bénédictions,  
Révérend père David Margaryan  
Pêtre Paroissial



## ԿԱՐԵԻՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Արդեօք Գիտէի՞ք թե՛.-

- **Ի՞նչ կ'ըսէ քահանան, երբ նոր մկրտուածին առաջին Ս. Հաղորդութիւնը կու տայ:**

Քանի որ Եկեղեցւոյ Ս. Ասագանէն ծնած քրիստոնեան տունալ պահուն ամենամաքուրն է, մկրտող հոգեւորականը անոր հաղորդելու ժամանակ կ'ըսէ. **«Մեր Տէր եւ Փրկիչի՝ Յիսուս Քրիստոսի Մարմինն ու Արիւնը թող քեզի համար փրկութիւն եւ առաջնորդ ըլլայ անվախճան կեանքի մէջ»:**

- **Ս. Պատարագի ժամանակ ո՞ր պահուն կը բաշխուի Ս. Հաղորդութիւնը:**

Երբ որ Դպրաց Դասը կ'երգէ **«Քրիստոս պատարագուելով կը բաշխուի մեր մէջ»**, պատարագիչ հոգեւորականը ծածուկ կ'աղօթէ, կը խաչակնքէ ինքզինք եւ ճշմարիտ Աստուծոյ խնդրանքներով կը դիմէ իրեն, ժողովուրդին եւ աշխարհին խաղաղութեան համար, թողութիւն հայցէ թշնամիներուն եւ զինք աստղներուն համար: Ապա պատարագիչ հոգեւորականը երկիւղածութեամբ կը ճաշակէ Տիրոջ Մարմինն եւ կը խմէ Բաժակէն վերջաւորութեան ըսելով. **«Անապական Մարմինդ թող կեանք ըլլայ ինծի համար, իսկ Սուրբ Արիւնդ՝ մեղքերուս քաւութիւն եւ թողութիւն»:** Ասկէ ետք, կը բացուի խորանին վարագոյրը, եւ սարկաւազը բարձրաձայն կ'ըսէ. **«Երկիւղով եւ հաւատքով մօտեցէ՛ք եւ սրբութեամբ հաղորդուեցէ՛ք»:** Այս հրահանգէն յետոյ, անոնք որոնք նախապէս պատրաստուած են, զոջալով, ապաշխարելով եւ խոստովանելով իրենց մեղքերը, կը մօտենան Ս. Հաղորդութեան:



## ԱՂԹՔ

### ՅԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

Քու խաղաղութիւնովի,  
ով Քրիստոս Փրկիչ մեր,  
որ մտքէ ու խելքէ շատ վեր է,  
ամուր եւ անվախ պահէ զմեզ ամէն չարութենէ.  
հաւասարէ զմեզ քու ճշմարիտ երկրպագուներուդ.  
հետ, որք հոգւով եւ ճշմարտութեամբ  
քեզ երկրպագութիւն կ'ընեն.  
Վասն զի Ամենասուրբ երրորդութեանդ  
կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ.  
այժմ եւ միշտ, յաւիտեանէ մինչեւ յաւիտեան.  
Ամէն:

### PRIÈRE POUR LA PAIX

Christ, notre Sauveur,  
dans ta paix qui dépasse toutes pensées et paroles,  
fortifie-nous et garde-nous sans peur devant tout mal;  
mets-nous aulang de tes vrais adorateurs,  
qui t'adorent en esprit et en vérité,  
car à la très Sainte Trinité conviennent la gloire, la  
souveraineté et l'honneur, maintenant et toujours et pour  
l'éternité de l'éternité. Béni soit notre Seigneur, Jésus-Christ.  
Amen.

# ՆՈՒԻՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ

**DON  
À L'ÉGLISE**



**DONATION  
FOR THE CHURCH**

## CHURCH:

Mr. & Mrs. Garo & Georgette Nichanian \$200.

### MOTHER'S DAY:

Mr. & Mrs. Hovsep & Mary Doramajian \$100.

IN THE MEMORY OF  
HER BELOVED MOTHER  
SIRANOUCHE MAGHAKIAN AROYAN  
& GRANDMOTHERS:

Miss Shoushan Aroyan \$50.

### FOR A PRAYER:

Mrs. Hasmig Khatchikian \$100.

IN THE MEMORY OF:  
THE LATE SYLVA MEKHGEAVAKIAN:

Mrs. Rachel Doramajian \$100

### YOUGHAKIN EASTER:

Dr. & Mrs. Arshavir & Nadya Gundjian \$200, Mrs. Lydia Sossoyan,  
Mr. Berdj Basmadjian, Mrs. Hildsa Kepekci \$100, Mr. & Mrs.  
Garbis & Hasmig Aposhian, Mrs. Niver Kasbar, Mr. Frederick  
Kalinian \$50, Mrs. Iris Voskian-Aslanian \$30.

## ՇԱԲՈՒԱՅ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԸ

Խանդը արուեստ է չարիք պատճառելու ակտի շատ ինքն իրեն  
բան ուրիշներուն:

Գարլ Կուսլաւ Եունկի  
Յոգեբան-Փիլիսոփայ

Ես յաճախ ծալլած եմ ծունկերս Աստուծոյ առջեւ, իրախուսուած  
այն համոզումով, որ ոչ մէկուն չեմ կրնար դիմել  
անհրաժեշտութեան պարագային: Կը հաւատամ, որ  
Աստուածաշունչը ամենալաւ պարգէն է Աստուծմէ մարդուն:  
Ամէն հրաշալի երեւոյթ Փրկիչէն հասած է մեզի, այդ Սուրբ  
Գիրքին շնորհիւ: Առանց անոր մենք չէինք կրնար տարբերել  
ճիշդը սխալէն:

Աբրահամ Լինթոլն

**ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ**

**SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL**

**ԿԻՐԱԿԻ, 10 Մայիս 2020**



Տիկ. Քարմեն Քելթիի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իր սիրեցեալ ամունոյն եւ Եկեղեցոյ նուիրեալ անդամ՝

**ՎԱՀԷ ՔԷԹԼԻԻ  
(VAHE KETLI)**

Մահուան 21-րդ տարելիցին առիթով



**ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՍԲ ԵՂԻՑԻ**

**ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՂՈԹՔ**

Քրիստոս որդի Աստուծոյ անխակալ եւ բարեգութ,  
գթա քո արարչական սիրովդ  
ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց:  
Յիշեալ յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ:  
Արա արժանի ողորմութեան քաւութեան  
եւ թողութեան մեղաց:  
Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո  
յաջակողմեան դասուն:  
Չի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն.  
դատաւոր կենդանեաց եւ մեռելոց:  
Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ.  
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանց յաւիտենից, ամէն:



## ՏԱՄԱԿՑԱԳԻՐ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Սայր Տաճարի  
հոգեւոր հովիւն ու ծխական խորհուրդը իրենց խորին  
ցաւակցութիւնները կը յայտնեն՝

Պոյաճեան, Սարեան, Մելքումով, Տեմիրտօվեն, Լէյլէքօլլու,  
Չայլաքեան, ՊԷԼ, Մըխճաւաքեան, Տեմիրճի, Պալեան եւ Քօչունեան  
ընտանիքներուն՝

Ողբացեալներ

Ալեքսան Պոյաճեանի (12 Մարտ 2020), Զերման Միսաք Սարեանի (13  
Մարտ 2020), Ալեաստըր Մելքումովի (14 Մարտ 2020), Նուրհան  
Տեմիրտօվենի (18 Մարտ 2020), Գեղուհի Լէյլէքօլլուի (23 Մարտ  
2020)

Զաւէն Չայլաքեանի (7 Ապրիլ 2020), Յակոբ ՊԷԼի (13 Ապրիլ 2020)

Սիլվա Մըխճաւաքեանի (14 Ապրիլ 2020), Սարիամ Տեմիրճիի (15  
Ապրիլ 2020), Յարութիւն Պալեանի (20 Ապրիլ 2020)

եւ Սօնա Քոչունեանի (4 Մայիս 2020):

### SYMPATHY & CONDOLENCES

The Parish Priest and the Parish Council of the  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal  
express their deepest condolences to the

Boyacian, Sariyan, Melkoumov, Demirdogen, Leylekoglou, Tchaylakian, Bel,  
Mekhgeavakian, Demirci, Balian, & Kotchounian families  
on the loss of their beloved:

Alikson Boyacian (March 12, 2010), Herman Misak Sariyan (March 13, 2020),  
Alexandre Melkoumov (March 14, 2020), Nurhan Demirdogen (March 18, 2020),  
Keghuhui Leylekoglou (March 23, 2020), Zaven Tchaylakian (April 7, 2020), Agop Bel  
(April 13, 2020), Silva Mekhgeavakian (April 14, 2020), Maryam Demirci (April 15,  
2020), Haroutioun Balian (April 20, 2020), & Sona Kotchounian (May 4, 2020).

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՅՈՑՑ ՑԱՌԱՋԻԿԱՑ ԾԱԲՅՈՒՄԱՆ

#### Մայիս- Mai

11, Երկուշաբթի - Լ ՕՐ ՑԻՆԱՆՑ

Lundi 11- 30ème jour de la période des 50 jours  
qui vont jusqu'à la Pentecôte

12, Երեքշաբթի - ԼԱ ՕՐ ՑԻՆԱՆՑ

Mardi 12 - 31ème jour

13, Չորեքշաբթի - ԼԲ ՕՐ ՑԻՆԱՆՑ

Mercredi 13 - 32ème jour

14, Հինգշաբթի - ԼԳ ՕՐ ՑԻՆԱՆՑ

Jeudi 14 - 33ème jour

15, Ուրբաթ - ԼԴ ՕՐ ՑԻՆԱՆՑ

Vendredi 15 - 34ème jour

16, Ծաբաթ- ԼԵ ՕՐ ՑԻՆԱՆՑ

Samedi 16 - 35ème jour

## **HOLIDAYS**

### **FEAST OF APPARITION OF THE HOLY CROSS**

This feast is dedicated to the Apparition of the Holy Cross in Jerusalem. At noon on May 19, 351, a bright, luminous cross appeared over the skies of Jerusalem, centered over an area spanning from the Mount of Olives (where Christ was betrayed and arrested) to Golgotha (where Christ was crucified). Awestruck, the faithful of Jerusalem rush to church to give thanks and glorify the Lord. Bishop Cyril (later St. Cyril of Jerusalem) subsequently wrote a letter to Emperor Constantine of Byzantium wherein he describes the miraculous and beautiful scene. St. Cyril tells Constantine that the apparition is a true testimony of the orthodox faith of Christianity.



Further, St. Cyril exhorts the Emperor that the appearance is a sign for him to remain steadfast in his faith, and to stop defending the heretical movement of Arianism and its promulgators. The Armenian translation of the Bishop's letter has been preserved by the Church, and is read each year on the Feast of the Apparition of the Holy Cross. The Armenian Church celebrates this feast 28 days following Easter Sunday.

### **THE 5TH SUNDAY AFTER EASTER** **GOOD SHEPHERD SUNDAY**

The fifth Sunday of Easter is known as Good Shepherd Sunday and it is the "World Day of Prayer for Vocations." The scripture lessons for this day concern the role of the shepherds of God's flock in the Church.

Each year on this Sunday, we reflect on the image of Jesus as the Good Shepherd who devotedly and kindly takes care of his flock.

Introducing himself as the good shepherd of his flock, Jesus makes three claims in today's gospel.

1) He knows his sheep and his sheep hear his voice: Just as the Palestinian shepherds knew each sheep of their flock by name, and the sheep knew their shepherd and his voice, so Jesus knows each one of us, our needs, our merits and our faults. He loves us as we are, with all our limitations, and he expects us to return his love by keeping his words. He speaks to us at every Mass, through the Bible, through our pastors, through our parents, through our friends and through the events of our lives. "God whispers to us in our pleasures, He speaks to us in our consciences, and He shouts to us in our pain!" (C.S. Lewis). 2) He gives eternal life to us, his sheep by receiving us into his sheepfold and giving us faith in Baptism, and by strengthening that faith in Confirmation. He supplies food for our souls in the Holy Eucharist and in the divine words of the holy Bible. He makes our society holy by the sacraments of matrimony and the priesthood. 3) He protects his sheep by placing them in the loving hands of his Almighty Father. Without him to guide us and protect us, we are an easy prey for the spiritual wolves of this world, including Satan and his minions.

In chapter ten of John's Gospel, Jesus adds two more roles to those of the good shepherd. He goes in search of stray lambs and heals the sick ones. Jesus heals the wounds of our souls through the sacrament of Reconciliation and strengthens us in illness and old age with the sacrament of the Anointing of the Sick. Jesus dies for his sheep: Just as the shepherds of ancient days protected their sheep from wild animals and thieves by risking their own lives, so Jesus died in expiation for the sins of all people.

Through today's gospel, Jesus teaches one of the central aspects of the ministerial priesthood: the priest as shepherd. It means that a priest is one who, by his consecration, lives for others. The title, "Father", like the title, "Shepherd," expresses a relation of loving service to others, from the most sacred ministries to the most trivial chores.

Life Messages: Let us become good shepherds and good sheep, good leaders and good followers.




Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճար  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

**Ս. ԵՒ ԱՆՄԱՅ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**  
**LA SAINTE MESS ET L'OFFICE DE REQUIEME**

Ուղիղ հեռարձակում - Live



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Ս. Պատարագ առաւօտեան ժամը 10:30-ին**

**La Sainte Messe à 10:30**

**Հոգեհանգստեան Պաշտօն կեսօրին**

**Office de Requieme à Midi**

Թէեւ ներկայ իրավիճակը անորոշութեամբ կը շարունակուի, սակայն մեր Եկեղեցւոյ Ս. Եւ Անմահ Պատարագը, հոգեհանգստեան պաշտօններն ու աղօթքները առցանց կերպով կը շարունակուին մատուցուի:

Անոնք, որոնք կը փափաքին դիմել հոգեհանգստեան պաշտօններու, աղօթքի խնդրանքներու իրենց հարազատներու ապաքինման համար, կրնան հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066 թիւին, մենք սիրով կ'ընդառաջենք Ձեր խնդրանքներուն միաժամանակ հաղորդակից դարձնելով Ձեզի Սեր սրբազան արարողութիւններուն:

Bien que la situation actuelle reste incertaine, la liturgie de la Sainte et Immortelle, les services de requiem et les prières continuent d'être offerts en ligne. Ceux qui souhaitent demander un service de requiem et des prières pour le rétablissement de leurs proches, veuillez appeler le Bureau de l'Église au (514)279-3066, nous serons heureux de répondre à vos demandes et de vous faire participer à nos rites sacrés.

**Nous acceptons également vos dons en ligne par**





Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր  
Տաճար

St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

Երեկոյեան Ժամերգութիւն եւ  
Բժշկութեան Աղօթք - Առցանց  
SERVICE DU SOIR ET PRIÈRE DE GUÉRISON  
Diffusion en direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Երեկոյեան Ժամերգութիւն եւ  
Բժշկութեան Աղօթք  
Մայիս եւ Յունիս ամիսներուն համար  
Ամեն Չորեքշաբթի երեկոյեան ժամը՝ 5:00-ին:  
«Ամեն ինչ որ կը խնդրէք աղօթքի մեջ՝ հաւատքով,  
պիտի ստանաք» (Մտ. 21:22):

SERVICE DU SOIR ET  
PRIÈRE DE GUÉRISON  
AUX MOIS DE MAI ET JUIN

Veuillez-vous joindre par la page de Facebook.  
Tous les mercredis soir à 17h:00

«Tout ce que vous demanderez dans la prière avec foi,  
vous le recevrez» (Mathieu 21:22).

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008

[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ  
Մայր Տաճար**  
**St. Gregory the Illuminator Armenian Cathedral  
of Montreal**

**ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ**  
**Ուղիղ հեռարձակում**



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Ս. Գիրքի Սերտողութիւն Առցանց  
Մայիս եւ Յունիս ամիսներուն**

Արժ. Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեանին հետ  
ամէն շինգշաբթի երեկոյեան ժամը՝ 5-ին:

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները  
աղօթակից դառնալու եւ հաղորդուելու  
փոխանցուելիք աստուածաշնչական գիտելիքներուն:

Սերտողութիւններուն հետեւիլ  
Եկեղեցւոյ դիմատետրին միջոցաւ:

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/  
[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Cathédrale Arménienne Saint-Grégoire  
l'Illuminateur de Montréal**  
**Études Bibliques**  
Diffusion en direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Études Bibliques**  
**Aux mois de Mai et Juin**

Rév. Père David Margaryan, Prêtre Paroissial  
Tous les jeudis à 17h:00

Nous invitons nos chers fideles  
à prier et à communiquer  
avec les connaissances bibliques.

Veillez suivre les programmes à travers la page  
Facebook de l'Église.

615 Avenue Stuart, Outremont, Québec H2V 3H2 / Tél.: (514) 279-3066/  
Fax: (514)279-8008/ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ  
Մայր Տաճար

St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

**Ս. ԵՒ ԱՆՏԱՅ ՊԱՏԱՐԱԳ - LA SAINTE MESSE**

Ուղիղ հեռարձակում – Facebook Live  Saint Gregory Armenian Apostolic  
Church of Montreal



**ՀԱՄԲԱՐՁՈՒՄ**

**Ascension du Christ**

**Հինգշաբթի, 21 Մայիս 2020**  
**առաւօտեան ժամը 11:00-ին:**

Պատարագիչ՝

Արժ. Տ. Դաւիթ Քիւյ. Մարգարեան  
Հոգեւոր Հովիւ


**Jeudi le 21 Mai 2020**

**à 11h00**

Célébrant:

Rév. Père David Margaryan  
Prêtre Paroissial

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008  
E-mail : stgregorychurch@gmail.com



## ԿԻՐԱԿԱՄՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ հեռարձակում – En direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



## Շաբաթ, 30 Մայիս 2020

Ժամերգութիւն - երեկոյեան ժամը՝ 5-ին:

## Samedi, le 30 Mai 2020

Office du soir à 17h00.